



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


406

21st Aug 1914

Mungo's sign to
keep record

1903

1
S - 80



2010

44, 294

№ 2

Լ. Ե. ՏԵՂՈՑՅԱՆ

ՄԱՐԴԻԿ ԻՆՉՈՒ ԵՆ
ՀԱՐԲՈՒՄ.

(ԸՆՄՏՏԱՆՈՒՄ.)

Թարգմ.

Ե. Ծ. Վ. Մ.

1903

Թաւրիդ

Թեմական Երազատիպ Հայոց Ասր. — Թաւրիդում:
Վաղամբոհիկ Եղիսաբէթ Միքաղաբէկեանի Յիշատակին.

№2

S - 80

ար

№ 9273

Լ. Կ. ՏԵՂՈՅՈՅ

ՄԱՐԴԻԿ ԻՆՉՈՒ ԵՆ,
ՀԱՐԲՈՒՄ.

(ԱԿՄԱՆԱՍԻՄ.)

1002
6167



1903

Թաւրիկ

Թեմական Արագատիպ Հայոց Ատր. — Թաւրիկում.
Վաղամեսիկ Եղիսաբէթ Միլզաբէկեանի Յիշատակին

ՅԱՌԱՋԱԲՈՆ

Հայ ժողովութելը, ինչպէս կապանքներից՝ երկար լացից լետոյ ազատւած մի մանուկ, երկար դարերի ընթացքում անշարժ և խաւարի ու լետագիմութեան մէջ մնալուց յետով, իւր աշխատասիրութեամբ, խնայողութեամբ և երբեմն էլ միջոցների անխտականութեամբ՝ տասն. և իններորդ գարու սկզբներից կարողացաւ աւելի անդարը և ապահով կեանք ունենալ Կովկասի քարտէզի և տիբրապետողների փոփոխութեան շնորհիւ։ Նա էլ կարիք զգաց մասնակից լինելու իրեն տռաջ բացւող եւրոպական քաղաքակրթութեան պատուղներին և չկարողանալով որոշել քաղաքակրթութեան էականը ձեւականից և օգտակարը վնասակարից, լոյսը կրակից և կենսատու ջերմութիւնը ալրող բոցերից ու ծխից, ժառանգորդ հանդիսացաւ աւելի արատների, արտաքինի ու կեղծի, քան էականի և ներքինի, որովհետեւ վերջինս աւելի գըմւարին և տեսողական աշխատանք էր պահանջում, քան առաջինը, որի համար նա ունէր աչք ու ախորժակ, հարաւցու տաք արիւն ու կիրք և նիւթական կարսղութիւն՝ գարերի ժառանգութեան՝ ճարպիկութեան հետ միացած։ Մինչզեռ նոր քաղաքակրթութիւնը ոլժ պէտք է տար, նեցուկ պէտք է դառնար նրան ոտքի կանգնելու, նա՝

107922-42

շատ քիչ բացառութեամբ զրկւեց իւր լաւ լատ-
կութիւններիցն էլ և ունեցած պակասութեանց
վրայ աւելացրեց նաև արեւուտքի արատները:
Նրա համար քաղաքակրթութիւնը ստացաւ ար-
տաքին կերպարանք. - շորեր, զարդեր, խմիչքներ,
զւարձութիւններ, մակերևութական ուսումն կամ
ուսման փշանքներ, ահա նրա ամբողջ ձեռք բե-
րած՝ ինչպէս ասացի՝ շատ քիչ բացառութեամբ:
Այսպիսի փոփոխութեան ենթարկւեցինք մենք՝
հայութեան բոլոր դասակարգերին պատկանող
անձինքս՝ — հոգեորական և աշխարհական, վա-
ճառական և արհեստաւոր, ծառալողներ և գիւ-
ղացիք, կանալք և մարդիկ առհասարակ և ալժմո
եթէ մենք գումարելու լինինք ստացած լաւն ու
վատը և կշռենք, հազիւ թէ առաջինը կէս ^ո կազմի մեր արատների: Բայց ժամանակ է սթափ-
ւելու, ժամանակ է գեղեցիկ և կազմակերպւած
գործունէութիւն սկսելու ալդ արատների դէմ:
Եթէ մեզ լաջողւեց ազատել հայ ժողովրդի մի ա-
մենափոքրիկ մասը նրանցից գէթ միքանիսից,
եթէ մենք գէթ չնչին կերպով ներշնչել կարողա-
ցանք նրան մոլորւած լինելու համոզմունքը,
եթէ կարողացանք առաջ բերել նրա գիտակցու-
թեան մէջ փ ո ք ը ի կ աշխատանք՝ մաքառելու
խղճի և կենցաղավորութեան անհամերաշխու-
թեան դէմ և ալդ երկուսի մէջ մի գեղեցիկ ներ-

գաշնակութիւն ստեղծելու, գա կլինի մի գործ
շատ մաքուր և արգասաւոր. մի գեղեցիկ սերմ,
որի առատ հունձը շուտ կըհասնի և կըքաղցրաց-
նի սերունդների ճաշակը: Այս ուղղութեամբ մեր
մէջն էլ սկսւած է հոգածութիւն և գործունէու-
թիւն. Հիւսիսից բժիշկ Բուդուղեանի գեղեցիկ և
մատչելի գրքերը, հարաւից՝ կրկին բժիշկ Վահան
Արծրունու բրօշիւները մեզ ալդ են ասում և
ալդ ճանապարհով առաջնորդել են կամենում: Ես
ևս նիրհող Պարսկաստանի նոր արթնացող հայ
ժողովրդի մի մասի անարժան հովիւս՝ բացի եկե-
ղեցու բեմից համարեա իւրաքանչիւր շարաթ ար-
տասանած թոյլ քարոզներից՝ ուզեցի գրքով և
գրչով էլ օգտակար լինելու ձգաել ժողովրդիկ
կենդանի եկեղեցու համար և ձեռնարկեցի նախ
աշխարհահոչակ և. Տալսոյի հեղինակութեանց
թարգմանութեան, որից յետով գուցէ լաջողւի
տալ նաև այլ նիւթեր՝ յատկապէս մեր կեանքից
վերցրած:

Այս անգամ տալիս ենք Տալսոյի „Մարգիկ
ինչու են հարբում (անմտանում)“ գրքովի
թարգմանութիւնը՝ որպէս մի անուրանալի ճշմար-
տութիւն, որի կենդանի ապացուցը կարող են լի-
նել շատերը և իմ անձնական փորձն. - մարդիկ,
որ մի ժամանակ խմել և ծխել են, իսկ հետզհե-
տէ համոզւելով, որ ալդ ասաիճանական և բարո-

յական անձնասպանութիւն է, կարողացել են տ-
ղաւաւել և ծխելուց և խմելուց:

Ես ինձ նւիրել էի Աւետարանի տշակերտու-
թեան և ծխում էի և խմում, թէե չափա-
ւոր: Այդ սկսել էի Տալստօլի նկատած պատանե-
կական շրջանից և շարունակում էի բաւական եր-
կար՝ ամբողջ տասն և ութ տարի: Զընալած
զգայուն սրտիս, անպայման մաքուր լինելու բու-
ռըն ծարաւիս և շատ գործ կատարելու տենչան-
քիս, տեղի էր ունենում հակառակը. — Ես նկատում
էի, որ արդիւնքը եթէ բացասական չէր, գոնէ
մօտենում էր նրան: Ես լիշում եմ այն բոլոր
մօմէնտներն, երբ առանձին ծարաւ էի զգում
ծխելու, մի բաժակ օղի կամ գինի խմելու և
պէտք է ասեմ, որ շատ էլ նախանձելի չէին ալդ
բոսէները: Ես ծխում էի և շատ անգամ առաջ
կանգնած մուրացկանին օգնելու հնարաւորութիւ-
նից զուրկ էի: Ես գործ էի ածում գինի, իսկ
մարդկանց ուզած ժամանակին ջուր չէի կարողա-
նում հասցնել: Ես մտածում էի անձիս, շուքիս
ու փառասիրութեանո մասին, բողոքում էր խիզնո
և ես ծխում էի ու ժամերով գահիճի մի ծայրից
միւս ծալրը չափում: 0՛, եթէ անհամեստութիւն
չըհամարւի մի առ մի պատմել թմբածութեանց
իւրաքանչիւր օրւալ հետքերը . . . բայց ալդ իւր
ժամանակին. իսկ առ ալժմո կարողացել եմ ազաւել

ալդ քաղաքակրթական խարուսիկ և սխալ նշան-
ներից և համարձակ կասեմ, որ երկար ժամանակ
խիզնու խարել եմ ինձ, մխիթարւել նրանով, որ
չեմ հարբել, չեմ վայր ընկեր, շշեր չեմ դատար-
կել, ափիօն չեմ ծխել և այլն և այլն. բայց, որ
ամենափոքր քանակութեամբ գործածած հարբե-
ցուցիչ նիւթերը նոյն ներգործութիւնն ունէին,
ինչ որ ունենում են մեծ քանակութեամեամբ
գործածած ժամանակ, դա ինձ համար անվիճելի
է, ինչպէս և անվիճելի կըլինի իւրաքանչիւր փոր-
ձել կամեցողի և բազմաթիւ նման օրինակներին
հետեւողի համար: Ալսպէս սիրելի ընթերցող, սթափ-
ւիր, եթէ ծխում կամ խմում ես, թող ալդ թլը-
րեցնող և խիզնդդ ըթացնող ու խաւարեցնող սո-
վորութիւնը, զսլիր քեզ մի երկու ամիս և գի-
տելով նոյն ընթացքի մէջ մնացողներին, կըհա-
կանաս, թէ՛ ի՞նչպէս և ի՞նչ չափով ես մոլորւած
եղել քաղաքակրթութեան վնասակար արտաքինը
միայն իւրացնողներից: ~~Դիտիր միջավայրդ, դրա-~~
~~ցիներիդ, ընկերներիդ, մտիր հիւանդանոցներն ու~~
~~աղքատանոցները, մտիր գժանոցներն ու բանե-~~
~~րը և ժողովիր ամենամանրամասն ստատիստիքական~~
~~(վիճակագրական)~~ տեղեկութիւններ և կըհամոզ-
ւիս, որ տեսածդ երեսովթների 9|10 մասը լառաջ
է եկած հարբեցուցիչ նիւթերի գործածութիւնից:
Որևէ բանով հարբում է անպայման վաշխառուն,

մատնիցը, ստախօսը, անբարեխիղճ արհեստաւորն ու վաճառականը, գիւղական բռունցքը, անաշխատ՝ իւր կեանքի ընթացքի և խղճի պահանջների մէջ անհամերաշխութիւն ունեցող հոգեորականը. հարբում՝ կեղեքողը, կաշառակերը. հարբում՝ անմտանում է կամ գինիով, կամ գարեջրով կամ ծիախոտով և ալին և ալին: Լաւ ուշադրութիւն դարձրու, եթէ գիւղացի ես, գիւղականների վերալ. մէկին ընտրում են տանուտէր, գրագիր կամ միքար. այդ պաշտօններում հաստատւելուց յետով նա մի տեսակ կտրում է հողից, մաքուր շինական աշխատանքից. ստրկահոգի և յանցաւոր գիւղացիք բռնուում են այս կամ այն գործում. ազատւելու համար նախ սկսում են գիւղական երաւատէրերից՝—նոցա շաքար, թէլ, պտուղներ և կամ անսառւններ իբրև պարգև, բայց իսկապէս որպէս կաշառք բերել: Անփորձ տանուտէրը սկզբում կարմրում՝ բարկանում է, վախում է խղճի ձախից, վախում է մօտենալ այդ նւէրներին, բայց բերողները պատում են, հացի են հրաւիրում, հարբեցնում են և դարձ ում կաշառակեր: Մի անգամ շեղւելուց յետով, արդէն սկսում է անկումն՝ հետզետէ աւելի մեծ չափով և մենք տեսնում ենք, որ գիւղական ընտրեալները, որոնք կաշառք առնելու առիթ ու սովորութիւն ունին, ամենից շատ են հարբում, հարբողներն էլ ամե-

նից շատ յանցանք գործում: Իիտիր բոլոր դասակարգերը, բարձրացիր աշխարհի ստեղծած դասակարգալին և սլաշտօնավարական աստիճաններով, զննիր այդ աստիճաններին կանգնածներին և տես թէ ովքեր են աւելի հարբում և աւելի յանցանք գործում: Իւրաքանչիւր քալափոխում կը հանդիպես ծալստոլի նկատած երևոյթի՝—ովքեր որ զգում են իրենց կեանքի ու պաշտօնի և խղճի պահանջների մէջ եղած անհամերաշխութիւնը. և որքան մեծ է այդ զգացմունքը, ալնքան էլ մեծ չափեր է ընդունում արտաքին միջոցներով մոռանալու և հարբելու ծարաւը, եթէ խղճի ձախնը չի լաղթանակում և ընդհատել տալիս մի անգամ ընդունւած ընթացքը:

Երբ հանդիպելու լինիս հիւանդոտ, ատպուշ, մաշւած և ցնցոտիների մէջ փաթաթւած երեխանների կամ մեծերի, ուսումնասիրիր պատճառները և կը գաս այն եզրակացութեան, որ այդ երևոյթների ամենամեծ տոկուը առաջ է գալիս հարբեցուցիչ նիւթերի գործածութիւնից: **Ա**յս մասին կարելի է գրել հատորներ, կարելի է նիւթ գարձնել գեղարւեստի՝ նկարչութեան, քանդակագործութեան, երաժշտութեան և գրականութեան: **Ց**ոյց տալ, թէ ի՞նչու բանական և խելացի մարդ արարածն՝ անսանանում և ընկնում է հարբեցուցիչ նիւթերի գործածութիւնից. ինչպէս է նա աստիճանարար

խորտակում իւր բոլոր սրբութիւններն ու սկզբունքները՝ արդարութիւնն ու օրէնքը, որպիսի բարձրութիւնից — ինչպիսի անգունդն է ընկնում և ալդպիսով թշւառանում և թշւառացնում իւր նմաններին և պէտք է հաւտատալ, որ նա կ'աշխատի ազատ պահել իրան ալդ արատներից, կ'աշխատի քարոզել նոյնը իւր շրջանում, ընկերներին, ծանօթներին, գիւղում ու քաղաքում, լսարանում ու եկեղեցու բեմից. մի խօսքով ամեն տեղ և ամեն միջոցներով և կըգալ մի օր, երբ կունենանք սթափւած՝ ժուժկալ և պայծառամիտ հասարակութիւն, որի կեանքն ու գործը բոլորսին այլ պատկեր և կերպարանք կունենալ, քան մեր ներկայ կենցաղապարսւթիւնը:

Մի գարմանալի երեսլթի վերալ կուզէի գարձնել ընթերցողի ուշադրութիւնը. — թէ որպիսի կապ ունին իրար հետ տուհասարակ հարբեցուցիչ նիւթերը և ինչպէս նրանցից մէկն ու մէկի գործածութիւնն անպալման առաջնորդում է գէպի միւս հարբեցողութիւնները:

Ամենքը տեսել և բազմաթիւ գէպքերից գիտեն, որ հարբեցողներն համարեա առանց բացառութեան ծխում են, իսկ ծխողները կարողանում են բաւականանալ ծխախոսով և հարբեցութեան անձնատուր չեն լինում, որովհետեւ ծխախոսով հարբելը շատ աւելի գիւրին է, մատչելի և հա-

ճելի ծխողների համար, քան օղիով, գինիով կամ այլ խմիչքներով հարբելը. ահա այս պատճառով ծխողներն աւելացնում են ծխածի քանակութիւնը՝ օրական քառորդ ֆունտ ծխախոտ կամ հարիւրներով պապիրոս են ծխում. ծխում անկողնում, կէս գիշերին, յատկապէս ծխելու համար արթնանում են, ծխում, թմրում և նորից քնում:

Ահա թէ ինչ պատահեց ինձ հետ.

Առաջ ես թողի ծխելը, բայց ճաշի ժամանակ մէկ կամ երկու բաժակ գինի գործածելու սովորութիւնս շարունակում էր: Ճաշից լետով երբեմն ցանկութիւն էի զգում ծխելու՝ մանաւանդ այն ժամանակ, երբ կէս բաժակ գինի աւելի էի գործածել. ուրիշ խօսքով ծխախոտը գեռ երբեմն իւր հոտով հաճելի էր թւում ինձ: Իսկ եթէ պատահում էր ընթրել և ընթրիքի ժամանակ մէկ կամ երկու բաժակ գինի խմել, քնած ժամանակս, երազում անպատճառ ծխում էի և կարծելով, որ իրօք ծխել եմ, երբեմն խմածի խալթից ու զայրութից արթնանում և որոշ թեթեւութիւն էի զգում, որ իսկապէս չեմ ծխել:

Ալդպիսով անցաւ եօթ ամիս և շնորհիւ ծխախոտից հարժարւելուս, գինին էլ կորցրեց իւր կարեսրութիւնն ինձ համար: Մանաւանդ զայրանում էի, երբ գինու շնորհիւ կրկնուում էին պապիրոսվ երազներս:

Ն. Ճռեցի վերջնականապէս թողնել առհասարակ
խմիչքի գործածութիւնը և սեղանի վերայ ունե-
նալ կամ „աբդուզ“ մածնաջուր և կամ „ոռուփ“
(շարբաթ որ և է մուրաբայի սիրօպով,) ինչպէս այդ
սովորութիւն է Պարսկաստանում և այդ օրւանից
միայն ես զգացի թէ ինչ աստիճանի գարշելի բան
է ծխախոտի հոտը, ծխողի արտաշնչութիւնը,
հարբած մարդը՝ օղու կամ գինու հոտով: Դեռ
ծխելս թողնելուց մի ամիս լետոյ՝ զարմանալի փո-
փոխութիւն նկատեցի իմ մէջ տոկունութեան և
աշխատասիրութեան վերաբերութեամբ. իսկ գինու
գործածութիւնը թողնելուց յետոյ այդ փոփոխու-
թիւնն աւելի զգալի և մխիթարական եղաւ ինձ
համար: Բայց ես այդ չեմ նկարագրիլ, որովհետե-
րստ իս անհամեստութիւն է, այլ կ'առաջարկեմ,
որ իւրաքանչիւր ծխողն ու խմիչքներ գործածողը
փորձի այդ անձամբ և կըտեսնի իրեն հաստատա-
կամութեան փայլուն և հրաշալի հետեանքները:
Իսկ այդ տեսակ տրամադրութիւն և կամք առաջ
բերելու համար, ես տալիս եմ ժամանակակից մեծ
բարոյախօս և աներկիւզ ճշմարտախօս Լ. Ն. Տալ-
ստովի „Խնչու են մարդիկ Հարբում“ աշխա-
տութիւնը և ուզում եմ հաւատալ, որ սիրով կըն-
դունեի այն և շատերը կ'աշխատեն փախչել ժա-
մանակակից մեծ մոլութիւններից՝ ծխելուց և
հարբելուց, քաջ հասկանալով հարբեցնող նիւթե-

րի գործածութեան գլխաւոր պատճառն և նրանց
հետեանքի կործանիչ աղդեցութիւնը մարդուս ֆի-
զիքական, մտաւոր, բարոյական կեանքի, և նրա
տնտեսական բարեկեցութեան վրայ:

Ե. Ռ. Վ. Մուրադեան



ԻՆՉՈՒ ԵՆ ՄԱՐԹԻԿ ՀԱՐԲՈՒՄ
(ՍԱՄՏԱՆՈՒՄ)

Ի՞նչ է անմտացնող՝ հարբեցնող նիւթերի՝ — օգու, գինու, գարեջրի, ափիօնի, լաշվի, ծխախոտի և միւս աւելի պակաս տարածւածների՝ — եթերի, մորֆինի, ճանճասպանի գործածութիւնը։ Ինչու է նա սկսել և արագութեամբ տարածւել ու տարածւում է ամեն տեսակ մարդկանց՝ թէ քաղաքակրթւած և թէ վայրենիների մէջ միատեսակ։ Սլո ի՞նչ կը նշանակէ, որ ուր չը կալ օզու, գինու և գարեջրի գործածութիւնը, այնտեղ գործ է ածւում ափիօն, լաշիշ, ճանճասպան և այլն. իսկ ծխախոտն ամեն տեղ։

Մարդկանց ինչու է հարկաւորւում անմտանաւ՝ հարբելը։

Հարցրէք առաջին հանդիպողից, թէ նա ինչու է սկսել գինի խմելը և ինչու է խմում այժմս, և նա կը պատասխանի ձեզ, «այնպէս, գուը է գալիս, ամենքն էլ խմում են», և կ'աւելացնի. „այնպէս, ուրախութեան՝ քէֆի համար“։ Մի քանիսն էլ, որոնք իրենց երբէք նեղութիւն չեն ուել մտածելու, լաւ է արգեօք թէ վատ, որ իրենք գինի են խմում. կ'ասեն և այն, որ գինին առողջութեան համար լաւ է, ոլժ է տալիս, այ-

սինքն կասեն այն, ինչի ստութիւնը որ վաղուց
ի վեր ապացուցւած է:

Հարցըէք ծխողից, թէ ինչու է սկսել ծխախոս
ծխելը և ծխում է ալժմս և նա նոյն ձեռվ կը
պատասխանի. „, Այնպէս, տիրութիւնից, բոլորն էլ
ծխում են “:

Հաւանականօրէն նոյն պատասխանը կը տան ա-
փիօն, լաշիշ, մորֆին և ճանճասպան գործածող-
ները:

„, Այնպէս, տիրութիւնից, քէֆի համար, բո-
լորն էլ նոյնն են անում “: Բայց չէ, որ ալդ
տ խ ր ո ւ թ ի ւ ն ի ց և ք է ֆ ի հ ա մ ա ր
լաւ է միայն այն պատճառով, որ բ ո լ ո ր ն
ե ն ա ն ո ւ մ — պտցնել մատներով, շւացնել,
երգել, նւազել դուգուկի վերայ և ալին և ալին,
անել այնպիսի մի բան, որի համար պէտք չէ ոչ
բնական հարստութիւնների վատնումն և ոչ մեծ
բանւորական ուժ. անել այն՝ ինչ որ չէ վնասում
ոչ մեզ, ոչ էլ ուրիշներին. բայց չէ որ ծխախո-
տի, գինու, լաշիշի և ափիօնի արտադրութեան
համար շատ լաճախ հողագուրկ ազգաբնակութեան
միինաւոր ամենալաւ հողաբաժնները բռնւած
են լինում հաճարի, կարտօֆիլի (գետնախնձորի),
կանեփի, կակաչի, ծխախոտի տնկարաններով և
վազերի ալդիներով, և միինաւոր բանւորներ՝
Անգլիայում ամբողջ ազգաբնակութեան մի ութե-

րորդ մասը իրենց ամբողջ կեանքի ընթացքում
զբաղւած են անմտացնող նիւթերի արտագրու-
թեամբ: Բացի դրանից՝ ալդ նիւթերի գործածու-
թիւնը պարզապէս վնասակար է. նա առաջ է բե-
րում ամենքին լալտնի և ամենքից վաղուց խսո-
ւովանած սոսկալի գժրախտութիւններ, որից ա-
ւելի շատ մարդիկ են կոտրւում, քան բալոր պա-
տերազմներից և վարակիչ հիւանդութիւններից
միասին: Եւ մարդիկ գիտեն այս, այնպէս որ չէ
կարող պատահչել, որ այս բոլորը տեղի ունենալ
տ խ ր ո ւ թ ի ւ ն ի ց , ք է ֆ ի հ ա մ ա ր ,
որովհետեւ ամ ե ն ք ն է լ ն ո յ ն ն ե ն ա ն ո ւ մ:
Այսուեղ մի ուրիշ բան պէտք է փնտուել: Անընդ-
հատ և ամեն տեղ հանդիպում էք մարդկանց,
որոնք սիրում են իրենց զաւակներին, պատրաստ
են ամեն տեսակ զոհաբերութիւն անել նրանց եր-
ջանկութեան համար, բայց և այնպէս վատնում
օգու, գարեջլի, կամ ատլիս են ափիօնի, լաշիշի
ու ծխախոտի այն, ինչը որ կարող էր կամ ամ-
բողջովին կերպարել խեղճութեան մէջ մնացած՝
սոված երեխաներին, կամ ազատել նրանց բազմա-
թիւ զբկանքներից: Ակներե է, որ եթէ իւր ըն-
տանիքի զրկանքների և տանջանքների ու անմը-
տացնող նիւթերից իրեն զսպելու մէջ ընտրութիւն
անելու հարկագրւած մարդը՝ ընտրում է առաջի-
նը, ուրեմն նրան ալդ բանն անելու հարկագրում

է մի ինչ որ աւելի նշանաւոր բան, քան այն հանգամանքը, որ ամ ենք ն է լ ա յ դ ե ն ա ն ո ւ մ, որ դ ա հ ա ճ ե լ ի է: Ակներեւ է, որ այս կատարւում է ոչ թէ տիրութիւնից, ուրախութեան և քէֆի համար, այլ և նրա համար, որ այստեղ կալ աւելի մեծ պատճառ:

Որքան ես կարողացաւ հասկանալ այս առթիւ եղած նիւթերի ընթերցանութիւնից, ինձ և զըլիսուրապէս այլ մարդկանց գիտելուց, երբ ես խմում էի զինի և ծխախոս ծխում, այդ պատճառը հետեւալն է. — գիտակցական կեանքի շրջանում մարդս յաճախ կարող է նկատել իւր մէջ երկու բաժան էութիւն՝ մինը — կոյր՝ զգալական, իսկ միւսը տեսող՝ հոգեսր: Կոյր կենդանական էութիւնը ուտում, խմում, հանգստանում, քնում, բազմանում և շարժուում է ինչոքս մի լարւած մեքենալ, տեսող՝ հոգեսր էութիւնը կապւած կենդանականի հետ, ոչինչ չի անում, այլ միայն գնահատում է կենդանական էութեան գործունէտիւթիւնը նրանով, որ չի միանում, երբ չի հաւանաւում կատարած գործը և համերաշի է գտանում, երբ ընդունում՝ քաջալերում է այն:

Տեսող գոյութիւնը կարելի է համեմատել կողմնացոյցի սլաքի հետ, որը մի ծայրով ուղղւած է գէսի հիւսիս, իսկ միւսով հարաւ և որը իւր ամբողջ երկարութեամբ ծածկւած է մի փաքրիկ քա-

նոնով և աներեւովթ է, քանի որ սլաքակիր մարմինը շարժւում է սլաքի ուղղութեամբ, բայց տեսնելի է դառնում՝ հէնց որ սլաքակիր մարմինը շեղւում է նրա ցոյց տւած ուղղութիւնից:

Ճիշտ նոյն ձևով էլ տեսող՝ հոգեսր էութիւնը, որի արտադարտութիւնը ուշմկօրէն խիզճ ենք կոչում, մի ծալրով միշտ ցոյց է տալիս բարին, իսկ միւսով չարը, և մեզ համար անտեսանելի է, քանի որ չենք շեղւել նրա՝ չարից գէսի բարին ցոյց տւած ուղղութիւնից: Բայց բաւական է, որ մենք խզճի հակառակ մի վարմունք թույլ տանք մեզ և երեան է զալիս հոգեսր էութեան զիտակցութիւնը, որը ցոյց է տալիս, որ մեր կենդանական էութեան գործունէտիւնը շեղւել է խզճի ցոյց տւած ուղղութիւնից: Ինչպէս որ ծովագնացը չէր կարող շարունակել իւր գործունէտիւնը լողաթիերով, մեքենայով կամ առագաստներով, երբ գիտէ, որ ինքը այն կողմ չի գնում, որ կողմը որ գնալու եր, մինչեւ որ իւր շարժումները չը համապատասխանեն կողմնացոյցի ուղղութեան, կամ չը ծածկի իրենից վերջինիս շեղւամը, ճիշտ նոյնպէս ել և ամենայն մարդ՝ նկատելով իւր խզճի և կենդանական գոյութեան անհամերաշխութիւնը, չի կարող շարունակել այդ գործունէտիւնը՝ մինչեւ որ կամ խզճի հետ չը համաձայնեցնի իւր գործերը և կամ չը ծածկի իրենից խզճի ցոյցում-



Ներն իւր կինդանական կեանքի անկանոնութեան
մասին՝ ԱՍՍԱՆԻԿԱՍԱՆ ԱՍՍ

Մարդուս ամբողջ կեանքը բազկացած է երկու
տեսակ գործունելութիւնից. առաջինը՝ երբ աշխա-
տում ենք մեր գործունելութիւնը խղճի հետ հա-
մերաշխ տաներ, իսկ երկորդը՝ երբ ծածկում ենք
մեզանից խղճի ցուցումները մեր կեանքը շարու-
նակելու հնորաւորութիւն ունենալու համար:

Կան մարդիկ, որ առաջինն են անում և կան,
որ անում են երկորդը։ Առաջնին հասնելու հա-
մար միայն մի միջոց կալ՝ — բարոյական բաւակա-
րութիւն, մեր ներքին լոյն առատացներու ջան-
քը և արթուն հակողութիւնն այն բանի, ինչը որ
նա լուսաւորում է։ Երկորդին հասնելու՝ — մեր
խղճի ցուցմունքները մեզանից ծածկելու համար
երկու միջոց կալ — արտաքին և ներքին, արտա-
քին միջոցն է՝ զբաղել այնպիսի բաներով, որոնք
հեռացնում են մեր ուշագրութիւնը խղճի ցուց-
մունքներից. ներքինը կարանում է հենց խղճի
խաւարեցնելու մէջ։

Ինչպէս որ մարդս կարող է ծածկել իւր տեսո-
ղութիւնից իրեն առաջ գտնւած առարկան երկու
ձեռք՝ գարձնելով իւր հայեացքը աւելի տղու
առարկաների վրա և աղտօտելով տչերը, ճիշտ
նոյն ձեռք և խղճի ցուցումները կարող է ծած-
կել իրենից երկու ձեռք. — արտաքին՝ զբաղեցնե-

լով իւր ուշագրութիւնը ամեն տեսակ պարապ-
մունքներով, հողսերով, գւարձութիւններով և
խաղերով. և ներքին՝ — բթացնելով՝ աղտօտելով
ուշագրութեան գործարանը։ Բուժի և սահմանա-
փակ բարոյական հասկացողութիւն ունեցող մարդ-
կանց համար յաճախ միանգամայն բաւական է
ուշագրութեան արտաքին զբաղումը, որպէս զի
ըլ նկատեն խղճի ցուցումներն իրենց կեանքի
անկանոնութեան մասին, բայց բարոյապէս զգա-
լուն մարդկանց համար այդ միջոցները յաճախ
բաւական չեն։

Արտաքին միջոցները միանգամայն չեն հեռաց-
նում ուշագրութիւնը կեանքի և խղճի պահանջ-
ների մէջ եղած հակասութեան գիտակցութիւնից.
այդ գիտակցութիւնը խանգարում է ապրել և
մարդիկ ապրել կարողանալու համար ձեռնարկում
են խղճը բթացներու ներքին, բայց աներկայ
միջոցի, որը կարանում է անմտացնող միջոցներով
ուղեղը թունաւորելու մէջ։

Կեանքը այնպէս չէ, ինչպէս պէտք լիներ
խղճի պահանջների համաձայն։ Կեանքն այդ պա-
հանջների համաձայն ուղղելու համար ոյժ չըկալ։
Այդ հակասութիւնները գիտակցելուց մեզ հեռաց-
նող զւարձութիւնները կամ բաւական չեն և կամ
զգեցրել են արդէն և աչա ապրել շարունակե-
լու հնարաւորութիւն ունենալու համար, չը նա-

լած կեանքի անկանոնութեան մասին խղճի ցուց-
մունքներին, մարդիկ թունաւորում են այն գոր-
ծարանը, ժամանակաւորապէս ընդհատերվ նրա
գործունէութիւնը, որի միջոցաւ արտայալաւում
են խղճի ցուցումները՝ ճիշտ այնպէս, ինչպէս որ
կանխագէտ կերպով աչքերը ազատազ անձը կը-
ծածկէր իւր տեսազութիւնից տեսնել չը ցանկա-
ցած իր:

II

Ճաշակի, բաւականութեան, գլարձութեան և
ուրախութեան մէջ չէ լաշեշի, ափիօնի, գինու և
ծխախոտի տարածման գաղանիքը. ոչ, այլ միայն
խղճի ցուցումները մեղանից ծածկելու պահանջի
մէջ:

Գնում եմ ես մի անգամ փողոցով և անցնելով
խօսակցող կառապանների մօտից՝ լսում եմ, որ
մինն ասում է միւսին. « լալանի բան է, որ Ժամակա-
լ - Հարբած մարդը կամաչի: »

Ժուժկալն ամաչում է այն բանից, ինչ որ ա-
մօթ չէ Հարբեցողի Համար: Այս բառերով արտա-
լուտած է այն գլխաւոր և Հիմնական պատճա-
ռը, որի Համար մարդիկ դիմում են Հարբեցնող
միջոցների: Մարդիկ դիմում են այդ միջոցներին
կամ ամառելու իրենց այն վարմունքից,
որը գործել են խղճի Հակառակ, կամ նրա Համար,

որ իրենց Հասցնեն այն դրութեան, երբ կարելի
է անել խղճին Հակառակ մի այնպիսի գործ, դէպի
որը մարդուս մզւումէ նրա կենդանական բնութիւ-
նը:

Ժամակալ մարդը կամաչի գնալ անառակ կանանց
մօտ, կամաչի գողանալ, կամաչի սպանել. Հար-
բածը ալգափիսի բաներից չի ամաչիլ և այդ պատ-
ճառով խղճից արգելուած մի գործ կատարելու Հա-
մար՝ մարդս Հարբում է՝ անմտանում:

Յիշում եմ իմ բարեկամուհի՝ պառաւ իշխանու-
հուն սպանելու Համար գատուող խոհարարի ցու-
ցումն, որը զարմացրեց ինձ: Նա պատմեց, որ
երբ իւր սիրուհի աղախնուն ուղարկեց և Հասու-
գործելու ժամը, գանակը ձեռին դիմեց դէպի նըն-
շարանը, բայց զդաց, որ չը Հարբած (Ժուժկալ)
չի կարող ի կատար ածել իւր մտադրութիւնը: . . .
« Ժուժկալ մարդն ամաչում է »: Նա վերագարձաւ,
խմեց առաջուց պահած օղու երկու բաժակը և
ապա միայն պատրաստ զգաց իրեն և կատարեց
իւր մտադրութիւնը:

Ոճիրներից տասից իննը ալսպէս է գործւում.
Համարձակաթեան Համար պէտքէ կոնծել»:

Կանանց անկման կէս մասը տառջ է գտիս գի-
նուց: Անտառականոցների բոլոր ալցելութիւնները
կատարում են Հարբած վիճակում: Մարդիկ գի-
տեն գինու այս՝ խղճը թժրեցնելու յատկութիւ-

նը և գիտակցաբար գործ են ածում այն՝ լատկապէս ալդ նպատակաւ :

Բաւական չէ, որ մարդիկ իրենց խղճի ձայնը թմրեցնելու համար հարբում են՝ քաջ գիտենարվ գինու ազգեցութիւնը, նոքառըիշներին հարկադիրու համար, որ իրենց խղճի հակառակ գործ անեն, գիտմամբ հարբեցնում են նրանց, կազմակերպում են մարդկանց հարբեցնելու (թըրեցնելու) գործը նրանց խղճից զրկելու նպատակաւ : Պատերազմներում երբ հարկաւորէ լինում ըսնամարտութիւն՝ զինուորներին միշտ հարբեցնում են : Սեաստօպօլիք կուիւներում ֆրանսիացի բոլոր զինուորներն հարբեցրած էին լինում :

Բոլորին լայտնի են բազմաթիւ անձինք, որոնք սոսկալի հարբեցող են դարձել կատարած այն ոճիրների պատճառով, որոնց համար տանջել է նըրանց խղճը : Ամեն ոք կարողէ նկատել, որ անրարոյական կեանք վարող մարդիկ աւելի են տրամադիր հարբեցնող նիւթեր գործածելու : Աւազակալին խմբերն ու անառակ կանալք չեն կարողանում առանց զինու ապրել :

Ամենքը գիտեն և ընդունում են, որ հարբեցոցիչ նիւթերի գործածութիւնը խղճի խայթի հետևանքն է, որ որոշ անբարոյական պարապմունքների ժամանակ հարբեցնող նիւթերը գործ են ածում խղճի ձայնը խլացնելու համար : Ամենքը գի-

տեն և ընդունում են, որ հարբեցնող նիւթերի գործածութիւնը խլացնում է խղճը, որ հարբած մարդն ընդունակ է այնպիսի գործեր կատարելու, որոնց մասին նա ժուժկալ ժամանակ չէր համարձակւիլ մտածել անգամ : Բոլորն էլ համաձայն են այս կէտում, բայց զարմանալի բան .— Երբ հարբեցնող նիւթերը գործածութեան չեն լաջորդում այնպիսի ոճիրներ, ինչպէս գողութիւն, սպանութիւն, բռնաբարութիւն և այլն, երբ հարբեցնող նիւթերը գործ են ածում ո՛չ թէ որևէ սոսկալի ոճիրներից լետոյ, այլ այնպիսի որոշ պարապմունք ունեցող մարդկանցից, որոնք լանցաւոր չեն համարւում մեր կողմից, և երբ ալդ նիւթերն ընդունում են ո՛չ թէ մի անգամից՝ մեծ քանակութեամբ, այլ չափաւոր կերպով, ալդ զէպքում, չը գիտեմ թէ ինչու, ենթադրւում է, որ հարբեցնող միջոցներն այլևս չեն ներգործում և չեն խլացնում խղճի ձայնը :

Այսպիսով ենթադրւում է, որ միջոցի տէր ոռւս մարդու ճաշից առաջ խմած մի գիլաս օղին ու ճաշից լետոյ խմած մի բաժակ գինին, Փրանսիացու արսէնթը, անգլիացու պօրտերն ¹ ու պօրտվէնը, ² Գերմանացու գարեջուրը, իսկ հարուստ չինացու կողմից չափաւոր քանակութեամբ ափիօնն ու ծըխախոտ ծխելլ կատարւում են միմիալն զուարձու-

¹ Պարեջրի աեսակը . ² զինին :

թեան համար և բոլորովին չեն ազգում մարդկանց
խղճի վերայ:

Ենթագրուում է, որ եթէ ալդ սովորական թմրեցու-
մից յանցանք, գողութիւն և ուպանութիւն չի կատար-
ւել այլ տեղի են ունեցել միայն լիմար և վատ գէպ-
քեր, ապա ուրեմն նրանք պատահել են ինքնըստ
ինքեան և առնչութիւն չեն ունեցել հարբեցու-
թեան հետ: Ենթագրուում է, որ եթէ ալդ մար-
դիկ քրէական յանցանք չեն գործել, ապա ուրեմն
և առիթ չունին իրենց խիղճը խլացնելու, և այն
կեանքը, որ վարում են մշտապէս իրենց թըմ-
րեցնող մարդիկ, միանգամայն լաւ է և նոյնը կը
մնար, եթէ մարդիկ չը հարբէին: Ենթագրուում է,
որ հարբեցուցիչ միջոցների մշտական գործածու-
թիւնը բոլորովին չի մթնեցնում նրանց խիղճը:

Զնալելով, որ իւրաքանչիւրը փորձով գիտէ, որ
դինու և ծխախոտի գործածութիւնից տրամադ-
րութիւնը փոխուում է և ամօթալի չի համարւում
այն, ինչ որ ամօթալի կը լինէր առանց գրգռման,
որ իւրաքանչիւր՝ խղճի թէկուղ աննշան խայթից
լետոյ ակամալից մարդու ձգուում է որևէ է հարբեցու-
ցիչ նիւթի և որ ալդ նիւթերի ազգեցութեան տակ
դժւար է կշռել մեր կեանքն ու դրութիւնը, որ
հարբեցնող նիւթերի հաւասարաշափ և մշտական
գործածութիւնը նոյն ֆիզիոգիական ներգոր-
ծութիւն ունի, ինչ որ ունենում է միանգամից

և անշափ ընդունածը, շափաւոր խմող և ծխող
մարդկանց այնպէս է թւում, որ թմրեցնող մի-
ջոցները նրանք բոլորովին խիղճը թմրեցնելու հա-
մար չեն գործածում, այլ բաւականութեան և
ճաշակի համար:

Իաց բաւական է՝ առանց մեզ պաշտպանել ցան-
կանալու՝ լուրջ և անկողմնակալ կերպով մտածել
ալդ մասին և կը համոզւինք, որ — նախ եթէ
անմտացնող նիւթերը միանգամից՝ մեծ քանակու-
թեամբ գործածած ժամանակ խլացնում են մար-
դուս խիղճը, ապա ուրեմն նոյն նիւթերի մշտա-
կան գործածութիւնը միւնուն ներգործութիւն
պէտք է ունենալ, որովհետեւ հարբեցնող նիւթե-
րը՝ ինչ շափով էլ գործածելու լինինք՝ ի բնէ մի-
տահսակ են ներգործում, — միշտ գրգուրով և
ապա լթացնելով ուղեղի գործունէութիւնը: Երկ-
րուդ. եթէ հարբեցնող նիւթերն իրենց լատ-
կութեամբ կարողանում են խլացնել մարդուս խիղ-
ճը ապա ուրեմն նրանք նոյն լատկութիւնն ու-
նին միշտ՝ և այն ժամանակ, երբ նրանց ազգե-
ցութեան շնորհիւ կատարւում է սպանութիւն,
գողութիւն, բռնութիւն, և երբ նրանց ազգե-
ցութեամբ ատւում է մի բառ, որը չէր ասւել.
մտածում և զգում են այն; ինչ որ չէին մտա,
ծիլ և զգալ առանց նրանց. և երբարդ. եթէ հար-
բեցնող նիւթերի գործածութիւնը հարկաւոր է

Խլացներու համար գողերի, աւազակների և անտո-
ռակ կանանց խիզճը, նրաք նոյն ձեռվ հարկաւոր
են և այնպիսի պարապմունք ունեցող մարդկանց,
որոնց գէմ է նրանց խիզճը, թէկուզ նրանց ալգ
պարապմունքը շրջապատողներից օրինական և
պատւառը համարւի:

Մի խօսքով՝ չի կարելի չը հասկանալ, որ հար-
բեցուցիչ նիւթերի գործածութիւնը՝ — մինի ալն պարը երածական, թէ մըշ-
տական, մեծ կամ փոքր չափով, բարձր կամ ստո-
րին շրջանում, առաջ է գալիս միեւնոյն պատճա-
ռով՝ — խլացներու խղճի ձայնը, որպէս զի չընկատ-
վի մարդուս գիտակցութեան պահանջների և նրա
կենցաղավարութէան հակասութիւնը:

III

Ահա սրանումն է հարբեցուցիչ նիւթերի, և
միջի ալլոց և ծխախոտի տարածման պատճառը,
որը համարեա թէ ամենավնասակարն է և ամե-
նատարածւած:

Ենթադրում է, որ ծխախոտը քէֆ է տալիս,
պարզում է միտքը, գրաւում է դէպի իրան ինչ-
պէս և ամէն տեսակ սովորութիւն միայն, երբէք
չունենալով խիզճ խլացներու ալն ներգործութիւ-

նը, որպիսին ունի զինին: Բայց արժէ փոքր ինչ
աւելի ուշագրութեամբ դիտել ալն պալմաններն,
որոնց ժամանակ ծխելու կարիք է զգացում, որ-
պէս զի համոզւինք, որ ծխախոտով հարբելը նոյն
ձեռվ է ներգործում խղճի վերալ, ինչպէս և զի-
նին, և մարգիկ գիտակցաբար գիմում են ալգ տե-
սակ հարբելուն՝ մանաւանդ ալն ժամանակ, երբ
ալգ հարկաւոր է լիշեալ նպատակով: Եթէ ծխա-
խոտը պարզելու լինէր մարդուս միտքը և ուրա-
խացնէր նրան, այդպիսի սաստիկ պահանջ չէր
զգացւիլ, որահանջ յալոնի և որոշ դէպքերում և
մարգիկ չէին ասիլ, որ նբանք աւելի շուտ պատ-
րաստ են մնալ առանց հացի: Քան առանց ծխա-
խոտի: և իրօք ծխելը յաճախ կերակրից գերադաս
չէին համարիլ:

Ալն խոհարարը, որը մորթել էր իւր տիրու-
հուն, պատմում էր, որ երբ ինքը ննջարան մը-
տաւ, գանակով կտրեց նրա կոկորդը և նա խըս-
ուալով վալը ընկաւ ու արիւնը ցալտեց աղբեւրի
նման՝ սարսեց. „Ես չը կարողացաւ վերջացնել
գործու, — ասում էր նա, — և գուրս եկալ նըն-
ջարանից ընդունարան, նստեցի ալնտեղ և ծխեցի
մի գլանակ“: Միայն ծխախոտով հարբելուց յետով
նա իրան կարող է զգացել կրկին վերադառնալու
ննջարան, վերջնականապէս մորթելու պառաւին
և ընտրելու նրա իրերը:

Ակներեւ է, որ ծխելու կարիքն ալդ բռպէին նրա
մէջ առաջ էր եկել ոչ թէ քէֆի գալու, կամ
միտքը պարզելու, ալլ խսկապէս խլացնելու համար
մի ինչ որ բան, որը նրան խանգարում էր աւար-
տել մտածած գործը:

Ծխախոսավ հարրելու ալգալիսի որոշ կարիքը
կարող է նկատել իւր մէջ ծխազներից իւրաքան-
չիւրը յարտնի՝ ամենագժւար բռպէներին: Յիշում
եմ ծխելու ժամանակներից, թէ երբ առելի մեծ
կարիք էի զգում ծխախոսի: Ալդ միշտ լինում էր
արնպիսի բռպէներին, երբ աշխատում էի չք լիշել
ալն, ինչ որ լիշում էի, ինչ որ ուզում էի մոռա-
նալ, չը մտածել: Նատած եմ միան, ոչինչ չեմ
անում, գիտեմ որ ես պէտք է սկսեմ աշխատանքս,
բայց չեմ ուզում. ես ծխում եմ և շարանակում
նստել նոյն ձեռօվ: Ես մէկին խօսացել եմ լինել
նրա մօտ հինգ ժամին, բայց նստել մնացել եմ
մի ուրիշ տեղ. ես լիշում եմ, որ ուշացել եմ,
բայց չեմ ուզում աղես լիշել ալդ, և ես ծխում
եմ: Ես զարդացած եմ և ասում եմ մարդուն վի-
րաւորական բաներ. գիտեմ, որ վատ եմ անում.
տեսնում եմ, որ պէտք է գագարել, բայց ես ցան-
կանում եմ ընթացք տալ բարկութեան: — ես
ծխում եմ և շարունակում զրգուիլ: Ես թուզթ
եմ խազում և առելի շատ եմ տարբեռմ, քան ին-
չով որ ուզում էի չափաւորել խազս և ես ծխում

եմ: Ես ինձ վատ գրութեան մէջն եմ զցել, վատ
եմ վարւել, սխալւել, պէտք է որ հասկանամ գը-
րութիւնս՝ նրանից գուրս գալու համար, բայց
չեմ ուզում խօսավանւել, — ես մեղագրում եմ
ուրիշներին և ծխում: Ես գրում եմ և այնքան
էլ զոհ չեմ գրածովս. պէտք է ձգել ալն, ցան-
կութիւն չը կալ վերջացնելու մտադրածս, և ես
ծխում եմ: Վիճում եմ և տեսնում, որ ես ու
հակառակսրդս չենք հասկանում և ցանկութիւն էլ
չունինք իրար հասկանալու, ուզում եմ արդարաց-
նել մտքերս. — ես շարունակում եմ խօսել և ծը-
խել:

Ծխախոսի առանձնարատկութիւնը միւս հար-
բեցուցիչ միջոցներից, բայց հեշտ հարրելուց՝ —
կալունում է նրանում, որ նա գիւրութեամբ զործ
է գրւում ամենամանը գէպերի ժամանակ: Չը
խօսելով ալն մասին, որ ափիօնի, զինու և յաշի-
շի գործածութիւնը պահանջում է որոշ յարմա-
րութիւններ, որպիսիք միշտ անհնարին է գտնել
իսկ ծխախոսն ու թուզթը միշտ կարելի է հետն
անենալ և որ՝ մինչ ափիօն գործածովն ու գի-
ները ուն մի զգւանք չի առաջ բերում, ծխախո-
տի գերազանցութիւնը միւս բոլոր հարբեցուցիչ
նիւթերից կարանում է նրանում, որ ափիօնի, յա-
շիշի և օգու թոյնը տարածւում է մեր բոլոր զոր-

ծերի և տպաւորաւթիւնների վերալ որոշ և այն էլ բաւական երկար ժամանակ, մինչդեռ ծխախոտի հարբեցութիւնը (թոյնը) կարող է ուզուած լինել իւրաքանչիւր գործի դէմ։ Յանկանում ես անել այն, ինչ որ պէտք չէ, ծխում ես մի գըլանակ ու անմտանում։ Հարբում այնչափ, որչսփ որ հարկաւոր է անելու այն, ինչ որ պէտք չէր և գարձեալ թարմ ու արթուն ես, կարող ես պարզ մտածել ու խօսել. կամ զգում ես, որ արել ես մի այնպիսի բան, որ պէտք չէր անել, — կրկին ծըխախոտ, և վատ կամ ամօթալի փարմունքի տըհաճ գիտակցութիւնը ոչնչանում է և կարող ես զբաղւել այլ գործով ու մոռանալ։

Զը խօսելով այն մասնաւոր գէպքերի մասին, երբ իւրաքանչիւր ծխող սկսում է ծխել ո՛չ թէ իւր սպորական սպահանջին բաւարարութիւն տալու և ժամանակ անցկացնելու համար, այլ որպէս մի միջոցի՝ խլացնելու իւր խղճի ձայնը այնպիսի ձեռնարկութեանց դէմ, որոնք կատարւելու են կամ կատարել են, արդեօք տկներեւ չէ այն խիստ կապն ու կախումն, որը գոյտթիւն ունի ծխել սիրոզների և նրանց կենցաղավարութեան մէջ։

Երբ են սկսում ծխել սպատանիները. համարեա միշտ ա՛յն ժամանակ, երբ նրանք կորցնում են մանկական անմեղութիւնը։ Բայց ծխողները կարողանում են թողնել ծխելը հենց որ կեանքի աւե-

լի բարոյական պայմաններումն են գտնուում և նորից սկսում են ծխել, հէնց որ ընկնում են ապականւած շրջանը։ Ինչո՞ւ խաղամոլները բոլորն էլ ծխում են։ Ինչո՞ւ կանանցից ամենաքիչ ծխողներ հանդիպում են օրինաւոր կեանք վարողների մէջ։ Ինչո՞ւ խելագարներն ու անբարոյական կանալք ծխում են անխտիր։ Սովորութիւնն իւր կարգին, բայց ակներեւ է, որ ծխելը շատ որոշ կախումն ունի խղճի ձայնը թմրեցնելու կարեքի հետ և որ մարդիկ այսպիսով հասնում են նպատակին։

Թէ ինչ չափով ծխելը խլացնում է մարդուս խղճի ձայնը, կարելի է գիտել իւրաքանչիւր ծխողի վերալ։ Ամեն մի ծխող, անձնատուր լինելով կրքի, մոռանում կամ զանց է առնում հասարակական կենցաղի այն ամենաառաջին պահանջները, որպիսիք նա անում է ուրիշներից և պահպանում անձամբ, քանի գեռ նրա խղճի ձայնը ծխախոտով խլացրած չէ։ Մեր միջին կրթութեան տէր իւրաքանչիւր մարդը անթոյլատրելի, անքաղաքավարքի և անմարդասէր է գտնում խանգարել այլոց հանգըստութիւնն ու խաղաղութիւնը, մանաւանդ այլոց առողջութիւնը՝ իւր հաճոյքի համար։ Ոչ ոք իրեն թոյլ չի տալ թրջել այն սենեակը, որի մէջ մարդիկ են նստած. աղմուկ հանել, գոռալ, ցուրտ, տաք և կամ ապականւած օդ թողնել ալնտեղ թոյլ տալ ալնպիսի վարմունք, որը խանգարում

ու վնասում է ալրց: Բայց հազար ծխողներից ոչ
մէկը չի քաշւիլ վատառողջ ծխով լցնելու այն սե-
նեակը, որի օդից շնչում են չթխող կանալք և
մանուկներ: Եթէ անգամ ծխել ցանկացողները
ներկալ եղողներից սովորաբար հարցնում են «ձեզ
անհաճոյ չէ», ալդ նրա համար, որ գիտեն ըն-
դունւած պատասխանը. «Հաճեցէք խնդրեմ». (չը նայած, որ չը ծխողին հաճելի չի կարող լի-
նել շնչել վարակիած օդը և գտնել ծխախոտի հո-
տած մնացորդներ ափսէների, աշտանակների, մոխ-
րամանների վրայ և բաժակների ու ֆինջանների
մէջ): Եթէ անգամ չը ծխող հասակաւորները կա-
րողանան տանել ծխախոտի ծուխը, մանուկներին,
որոնցից ոչ ոք չի հարցնում, — երբէք ալդ հա-
ճելի և օդտակար լինել չի կարող: Սակայն միւս
բոլոր դէպքերում ազնիւ և մարդասէր մարդիկ
ծխում են երեխանների ներկալութեամբ՝ ճաշի ժա-
մանակ, փոքրիկ սենեակներում՝ վարակելով օդը
ծխախոտի ծխով և չզգալով ալդ վիջոցին խղճի
խալթ տատծ բանը: Սովորաբար տառւմ են, ինչ-
պէս և տառւմ էի ես, որ ծխելը նպաստում է
մտաւոր աշխատանքին, և եթէ նայելու լինինք
մտաւոր աշխատութեան քանակին, կասկած չըկար
որ ալդ ալդպէս է: Ծխող մարդը, որը հենց ծը-
խելու պատճառաւ գագարում է իւր մտքերը
կշռելուց ու գնահատելուց, ալնպէս է կարծում,

որ «լանկարծ նրա մտքերը շատացել են»: Բայց
այդ երբէք չի նշանակում, որ նրա մտքերը շա-
տացել են, այլ միայն այն, որ նա կորցրել է իւր
մտքերը (կօնտրօլի) խիստ վերաքննութեան են-
թարկելու ընդունակութիւնը:

Երբ որ մարդս աշխատում է, նա իւր մէջ
նկատում է միշտ երկու գործութիւն՝ մինն աշ-
խատող, իսկ միւսը՝ աշխատանքը գնահատող:
Որքան խիստ է գնահատութիւնը, այնքան դան-
դաղ ու լաւ է գործը և ընդհակառակն: Իսկ եթէ
գնահատողը հարբեցուցիչ նիւթի ազդեցութեան
տակ լինի, գործը ըստ քանակի կըլինի շատ, իսկ
ըստ որակի՝ ստոր:

«Եթէ ես չեմ ծխում, գրել չեմ կարող.
գրելս չի գալիս. ես սկսում եմ և չեմ կարողա-
նում շարունակել». ասում են՝ և ասում էի սովո-
րաբար: Նշանակում է այն, որ ինչ էլ այժմս ու-
զում ես գրել արդէն, գեռ չի հասունացել գի-
տակցութեանդ մէջ, այլ միայն աղօտ կերպով ներ-
կալանում է քեզ, և քո մէջ ապլող ու գնահա-
տող քննադատը, որը հարբած չէ ծխախոտով, այդ
է ասում քեզ: Եթէ գու չըծխէիր՝ կըթող-
նէիր սկսածդ գործը և կըսպասէիր այն ժամանա-
կին, երբ ինչի մասին որ մտածում ես, կըպարզ-
ւէր քեզ համար: Դու կաշխատէիր խորին կերպով
թափանցել այն բանում, ինչ որ աղօտ ներկաւա-

նում է քեզ. ի նկատի կառնելիր առաջ եկած ընդդիմախօսութիւնները և կըլարէիր քո ամբողջ ուշագրութիւնդ, որպէս զի մտքերդ պարզ լինէին: Բայց դու ծխում ես, ներքին քննադատդ հարբում է և գործիդ արգելառիթները հեռացւում են. ինչ որ չըծխած, արթուն ժամանակ քեզ չնշին էր թւում, կրկին նշանաւոր է երեսում. ինչ որ մութ էր, ալլես ալդպէս չի ներկայանում. ընդդիմախօսութիւններն անյալտանում են և դու շարունակում ես գրել, և գրում ես արագ ու շատ:

IV

Բայց միթէ ալդպիսի փոքր ու չնշին փոփութիւնները, որպիսիք տեղի են ունենում ծխախոտի և գինու չափաւոր գործածութիւնից, կարող են առաջ բերել որևէ նշանաւոր հետևանքներ: Հասկանալի է, որ եթէ մարդս շատ ափիօն կամ լաշիշ է ծխում, հաշըրում է զինիով այնչափ, որ ընկնում և կորցնում է գիտակցութիւնը, ալդ տեսակ հարրեցութեան հետևանքները կարող են շատ նշանաւոր մնել. բայց այն, եթէ մարդս գինու կամ ծխախոտի թեթև ազգեցութեան տակ է գտնւում, չի կարող որևէ նշանաւոր հետևանք ունենալ»: — այսուհետեւ առում սոմօրաբար: Մարդկանց թւում է, որ փոքր թունաւորումն, գիտակցութեան փոքր չափով խաւարումն չի կարող նշանաւոր ազգեցու-

թիւն առաջ բերել: Բայց մտածել ալսպէս, նշանակում է ընդունել միայն, որ ժամացուցին վնասակար կարող է լինել քարին զարկւիլը, իսկ եթէ մի փոքրիկ բան գցենք նրա մեքենաների մէջ, չի կարող վնասել նրան:

Զէ որ մարդկալին կեանքը զեկավարող գլխաւոր աշխատանքը ոչ թէ ձեռքերի, ոտների և մէջքի շարժոգութեան, այլ գիտակցութեան մէջն է: Գեռքով կամ ոտքով մի բան կատարելու համար, նախ հարկաւոր է, որ որոշ փոփոխութիւն առաջ գալ մեր գիտակցութեան մէջ: Ահա այդ փոփոխութիւնն է սրաշում մարդուս բոլոր լաջորդական գործունէութիւնը: Իսկ այդ փոփոխութիւնները լինում են շատ մանրիկ և համարեա աննկատելի:

Երիւլով ուզզեց աշակերտի նկարի ուրսւագիծը: Աշակերտը՝ տեսնելով փոխւած ուրսւագիծն՝ ասաց. «Այ քեզ բան, հազիւ միայն փոքրինչ ձեռք պւիք նկարիս և բոլորին ուրիշ բարձաւ»: Երիւլովէ պատասխանեց. «Գեղարւեսան այնտեղից է սկսում, որտեղից սկսում է «փոքրինչը»:

Այս բանաձեւը զարմանալի ճիշտ է, ոչ թէ միայն զեղարւեսաի, այլ ամբողջ կեանքի վերաբերմամբ: Կարելի է ասել, որ ճշմարիտ կեանքը սկսում է այնտեղ, որտեղից սկսում է «փոքրինչը», այնտեղ, ուր տեղի ունեն մեզ «փոքրինչ»

Երեցող՝ հազիւ նշմարելի փոփոխութիւններ։ ծըշ-
մարիտ կեանքը ոչ թէ այնտեղ է կատարւում, ուր
տեղի ունին մեծամեծ փոփոխութիւններ, ուր փո-
խադրւում և ընդհարւում, կռւում և իբար սպա-
նում են մարդիկ, այլ նա կատարւում է այնտեղ,
ուր որ տեղի ունին անսահման փոքրիկ փոփոխու-
թիւններ։

Պասկօլնիկովի իսկական կեանքը այն ժամա-
նակ չէր կատարւում, երբ նա սպանում էր պա-
ռաւին կամ նրա քրոջը։ Սպանելով պառաւին և
մանաւանդ քրոջը, նա իսկական կեանքով չէր ապ-
րում, այլ գործում էր որպէս մեքենայ, անում էր
այն, ինչ որ չէր կարող չանել. պարզում էր այն
փամփուշտը, որը վազուց դրւած էր նրա մէջ։
Պառաւի մէկը սպանւած է, միւսը կանգնած նրա
առաջ, իսկ կացինն էլ ձեռքին է։

Պասկօլնիկովի իսկական կեանքը կատարւում
էր ոչ թէ այն ժամանակ, երբ նա հանդիպեց պա-
ռաւի քրոջը, այլ այն ժամանակ, երբ նա դեռ ոչ
մէկին չէր սպանել երբ դեռ ուրիշի բնակարան
չէր մտել սպանութիւն կատարելու մտքով, երբ
ձեռքին կացին և վերարկուի վերայ չունէր այն
հանգուցը, որից կախում էր կացինը։ Այլ այդ
կեանքը կատարւում էր այն ժամանակ, երբ նա
սպառաւի մասին չէր էլ մտածում. այլ պառկած
գահաւորակի վերայ իւր բնակարանում, մտածում

էր ոչ թէ պառաւի մասին, կամ թէ արդեօք կա-
րելի է մի մարդու կամքով ջնջել աշխարհի երե-
սից միւս աւելրդ և վնասակար մարդուն, այլ
մտածում էր. — արդեօք պէտք է, որ ինքն ապ-
րի Պետերբուրգում, պէտք է արդեօք մօրից փող
վերցնել թէ ոչ և միւս՝ պառաւի հետ ոչ մի
առընչութիւն չունեցող խնդիրների մտսին։ Եւ ա-
հա հէնց այդ ժամանակ, կենդանական գործու-
նէութիւնից միանգամայն անկախ շրջանում, վճո-
ւում էին այն խնդիրները, կըսպանի նա արդեօք
պառաւին, թէ ոչ։ Այս հարցերը վճուում էին ոչ
թէ այն ժամանակ, երբ նա, սպանելով պառաւ-
ներից մէկին, կացինը ձեռքին կանգնած էր միւսի
առաջ, այլ այն ժամանակ, երբ նա ոչ թէ գոր-
ծում, այլ մտածում էր միայն. երբ գործում էր
միայն նրա գիտակցութիւնը և այդ գիտակցութեան
մէջ կատարւում էին հազիւ նշմարելի՝ փոքրիկ
փոփոխութիւններ։ Եւ ահա հէնց այդ ժամանակն
է աւելի նշանաւոր և կարեւոր լինում մտքի պար-
զութիւնը՝ արծարծւած խնդիրը վճռելու համար։
Ահա հէնց այդ ժամանակ մի բաժակ գարեջուր և
ծխած մի հատիկ պապիրոսը կարող են արգելք
լինել խնդրի վճռին, կարող են հեռացնել այդ
վճռը, խլացնել խղճի ձայնը, նպաստել խնդրի
լուծան յօգուտ ստոր՝ կենդանական բնութեան,
ինչպէս այդ տեղի ունեցաւ Պասկօլնիկովի հետ։

Հազիւ նշմարելի փոփոխութիւններ, մինչդեռ հէնց
նրանցից են առաջ գալիս ամենավիթ խարի, սոս-
կալի՛ հետևանքներ: Նրանցից, ինչ որ տեղի կու-
նենալ, երբ մարդս վճռեց ու սկսեց գործել, կա-
րող են փոխել նիւթական շատ ու շատ բաներ,
կարող են կործանել տներ, հարստութիւններ,
մարդկանց մարմիններ և այլն, բայց մարդուս դի-
տակցութեան մէջ բուն դրածից աւելի՞ն՝ երբէք
չկ կարող լինել: Պատահելիքի սահմանները միշտ
գրւած են գիտակցութիւնից:

Բայց գիտակցութեան շրջանում տեղի ունե-
ցող հազիւ նշմարելի փոփոխութիւններից կարող
են առաջ գալ իրենց նշանակութեամբ աներեա-
կալելի հետևանքներ, որոնց համար սահմաններ
չըկան:

Թող չըկարծեն, որ ասածներս որևէ առընչու-
թիւն ունին կամքի ազատութեան կամ գէտերմի-
նիզմի վերաբերեալ խնդիրների հետ: Այս առար-
կաների մասին խօսակցութիւնները միանգամայն
աւելորդ են նպատակիս և առհասարակ որ և է
խնդրի համար: Զը վճռելով այն խնդիրը, թէ
արգեօք մարդս կարող է գարւել այնպէս, ինչպէս
ինքն է կամենում (ինդիք, որն ըստ իս սիսալ է
գրւած), ես ասում եմ միայն այն, որ մարդկանին
գործունէութիւնը որովհետեւ որոշում է նրա
գիտակցութեան մէջ կատարւած չնչին փոփոխու-

թիւններավ (միւնոյն է ընդունում ենք արգեօք,
թէ չենք ընդունում կամքի ազատութիւն կոչ-
ւած բանը), ապա ուրեմն պէտք է առանձնապէս
ուշադիր լինել այն դրութեան, երբ արտայալու-
ում են այդ չնչին փոփոխութիւնները, ճիշտ այն-
պէս՝ ինչպէս որ հարկաւոր է ուշադիր լինել դէ-
պի այն կշեռքի դրութիւնը, որով մենք իրեր ենք
կշռում: Որքան այդ կախւած է մեզանից, պէտքէ
աշխատել՝ գնել մեզ և ուրիշներին այնպիսի պար-
մաններում, որ չըխանգարւին մտքի նրբութիւնն
ու պարզութիւնը, որոնք հարկաւոր են գիտակ-
ցութեան կանոնաւոր գործունէութեան համար և
ոչ թէ հակառակ գարւիլ, ջանալով գժւարացնել և
շփոթել գիտակցութեան այդ աշխատանքը հար-
եցուցիչ նիւթեր գործածելով:

Զէ որ մարդս հոգեւոր և կենդանական էակ
է: Մարդուն կարելի է զեկավարել՝ ազգելով նրա
հոգու վրայ և կարելի է զեկավարել ազգելով նրա
մարմնի՝ կենդանականի վերայ ճիշտ նոյն ձեռով,
ինչպէս որ ժամացուցը կարելի է շարժել ուսքով
և գլխաւոր անւոր: Ինչպէս որ ժամացուցի մէջ
աւելի լարմար է գործել ներքին կազմութեամբ
(մեխանիզմով), այնպէս էլ մարդուս՝ մէջ էամ
ալլոց — աւելի լարմար է ազգել գիտակցութեան
միջոցով: Ինչպէս որ ժամացուցի մէջ պէտք է
հսկել մեխանիզմի վերայ, որով աւելի գիւրին է

շարժել այն, այնպէս էլ մարդու մէջ պէտք է պահպանել գիտակցութեան մաքրութիւնն ու պարզութիւնը, որովհետեւ նրանով ամենադիւրին գործն է մարդուս ղեկավարելլ. սրանում կասկած չի կարող լինել և բոլոր մարդիկ էլ գիտեն այս: Բայց ստեղծում է մեզ խաբելու պահանջ. մարդիկ շատ էլ չեն ուզում, որ նրանց գիտակցութիւնը կանոնաւոր գործէ, այլ ցանկանում են, որ օրինաւոր թւի այն, ինչ որ իրենք են անում և գիտակցար գործ են ածում այնպիսի նիւթեր, որոնք խանգարում են գիտակցութեան կանոնաւոր աշխատանքը:

V.

Խմում և ծխում են ոչ թէ այնպէս՝ տիրութիւնից, ոչ թէ քէֆի համար, ոչ թէ այն պատճառով, որ հաճելի է, այլ նրա համար, որ խլացնեն իրենց մէջ խիղճը: Եւ եթէ ալդպէս է, ուրեմն որքան սոսկալի պիտի լինին նրա հետեանքները: Իրաւ, երեակալեցէք, ինչի՞ նման կըլինէք մի շինութիւն, որը մարդիկ շինէին ոչ թէ ընդունւած կանոնով, որով պահանջւում է կառուցանել պատերն ուղղահայեց, ուղիղ գծով, շափելով ուղղագիծ մարմնով և անկիւնները՝ ուղղանկիւն անկիւնաչափով, այլ պատերի ուղղութիւնը որոշելու համար գործածէին ճկուն մար-

մին, որ լնդունակ լինէր ամեն ուղղութիւն ընդունելու պատերի անհարթութեան վերայ, իսկ անկիւններն էլ չափէին մի այնպիսի անկիւնաչափով, որը ամեն տեսակ սուր ու բութ անկիւններին հաւասարւէր ու յարմարւէր:

Բայց չէ որ մեզ հարբեցնելու շնորհիւ նոյն բանն է կատարւում կեանքի մէջ: Ոչ թէ կեանքն է կատարւում խղճի համաձայն, այլ խիղճն է ճբկում կեանքի համաձայն:

Ալդ տեղի ունի անհատների կեանքում. այդ նոյնը տեղի ունի և ամբողջ մարդկութեան կեանքում, որը կազմւած է առանձին անձերի կեանքերից:

Որպէսզի հասկանալ կարողանանք մեր գիտակցութիւնն ալդպէս բթացնելու ամբողջ նշանակութիւնը, թող իւրաքանչիւր մարդ լաւ լիշիւր հոգեկան կացութիւնն իրեն կեանքի իւրաքանչիւր չըջանում: Ամէն մարդ կըգտնի, որ կեանքի իւրաքանչիւր ըլջանում նրա առաջ կանգնած էին բարոյական որոշ խնդիրներ, որոնց վերաբերմամբ նա պէտք է վճիռ տար, որոնցից և կախւած էր նրա կեանքի ամբողջ երջանկութիւնը: Ալդ խընդիրները վճուելու համար հարկաւոր է լարել ուշադրութիւնն աւելի մեծ չափով: Ուշադրութիւն լարելը կազմում է աշխատանք: Իւրաքանչիւր աշխատանքի ժամանակ, մամաւանդ նրա սկզբին՝ կալ

մի շրջան, երբ աշխատանքը թւում է ծանր, տանգող և մարդկալին թուլութիւնը թելադրում է ցանկութիւն՝ թողնել այդ աշխատանքը:

Սկզբում ֆիզիքական աշխատանքը միշտ չարչարանք է թւում. բայց աւելի մեծ չարչարանք է թւում մտաւոր աշխատանքը: Ինչպէս Լէսսինգն է ասում, մարդիկ մի լատկութիւն ունին՝ «դադարում են մտածելուց, հէնց որ մտածելը դըժւարութիւններ է ներկալացնում», հէնց այն ժամանակ, կաւելացնեմ ես, «երբ մտածելը սկսում է արդիւնաւէտ դառնալ»: Մարդս զգում է, որ իւր առաջ դրւած խնդիրների լուծումն պահանջում է լարւած, լաճախ ծանր աշխատանք և ցանկութիւն է առաջ գալիս այդ բանից խոյս տալու (ծլկւելու): Եթէ նա չունենար իրեն հարբեցնելու ներքին միշոցներ, նա չէր կարողանալ արտաքսել իւր գիտակցութիւնից իրեն առաջ դրւած խնդիրներն և կամայ ակամայ հարկադրւած կըլինէր վճռելու այն: Եւ ահա մարդս գտնում է նրանց վանելու միշոցը, և հէնց որ նրանք նորից գլուխ են բարձրացնում, իսկոյն դիմում է գիտցած միշոցին և գործ է դնում այն: Հէնց որ վճռելու հերթական խնդիրները սկսում են տանջել նրան, մարդս իսկոյն դիմում է այդ միշոցներին և գլուխ է պրծացնում շփոթող խնդիրների առաջ բերած անհանգստութիւնից: Գիտակցութիւնը դադարում է նրանց լուծումը

պահանջելուց և ըլլուծւած խնդիրները մնում են առկախ մինչև հետևեալ սթափումն: Բայց հետեւեալ սթափման ժամանակ կրկնում է նոյնը և մարդս ամիսներով ու տարիներով, երբեմն ամբողջ կեանքի ընթացքում շարունակում է կանգնած մնալ նոյն բարոյական խնդիրների առաջ՝ ոչ մի քայլ առաջ չըգնալով նրանց լուծելու համար, մինչդեռ բարոյական խնդիրներ լուծելու մէջն է կայանում կեանքի ամբողջ շարժումը:

Կատարւում է միևնոյն երևոյթը, ինչ որ տեղի կունենար, եթէ մարդս պղտոր ջրի միջից աշխատէր, ցանկանար տեսնել ջրի լատակը՝ հանելու այստեղից թանկագին մարգարիտը, բայց չուզենալով մտնել ջրի մէջ, գիտակցաբար խառնէր և պղտորէր ջուրը՝ — հենց որ նա պարզիլ սկսէր: Հարբեցող մարդը շատ անգամ ամբողջ կեանքի ընթացում կանգնած է մնում անշարժ, նոյն՝ մի անգամ հերացրած՝ մութ, հակասող աշխարհայեցողութեամբ, սթափւելու իւրաքանչիւր դէպքում դէմ ընկնելով այն պատին, որին դէմ էր ընկել 10 - 20 տարի առաջ, և որը ոչնչով չի կարելի ծակել, որովհետեւ նա գիտակցաբար բթացնում է մտքի այն սուր ծալը, որով միայն կարող էր ծակել պատը:

Թող ամեն ոք իշխ իրեն այն շրջանում, երբ նա խմում և ծխում էր, և թող նոյնը ստուգի

ալլոց վերալ և իւրաքանչիւրը կը նշմարի մի մըշտական գիծ, որով հարբեցող մարդիկ տարբերւում են այդ արատներց ազատ մարդկանցից. որքան աւելի է հարբում մարդս, նա բարուապէս ալնքան աւելի անշարժ է մնում:

Ինչպէս մեզ նկարագրում են, մասնաւոր տնհատների համար սոսկալի են լաշիշի և ափիօնի գործածութեան հետեւանքները. սոսկալի են մեզ ծանօթ օղու գործածութեան հետեւանքները մշտական հարբեցաղների համար, բայց անհամեմատ աւելի սոսկալի են ամրողջ հասարակութեան համար այն բանի հետեւանքներն, ինչ որ նոքա անվնաս են համարում, այնէ՝ օղու, գինու, գարեջրի, ծըխախոտի չափաւոր գործածութիւնը, որին անձնատուր է լինում մարդկանց մեծամասնութիւնն և մանաւանդ մեր աշխարհի՝ ալսպէս կոչւած՝ կրթւած շրջանները: Այդ հետեւանքները սոսկալի պիտի լինին, եթէ ընդունենք այն, ինչ որ չի կարելի ըլնդունել, որ հասարակութեան դեկավարող գործունէութիւնը՝ — քաղաքական, գիտական, քարչական, գրական, գեղարւեստական և ալլն, գլխաւորապէս կատարւում է աննօրմալ, հարբած դրութեան մէջ եղած մարդկանց ձեռքով: Սովորաբար ենթադրում է, թէ արև մարդը, որը, ինչպէս և մեր ունեւոր գասահարդերի մեծամասնութիւնը, դործ է ածում սպիր-

տալին խմիչքներ կերակուր ընդունելու իւրաքանչիւր դէպքում, գտնուում է հետեւեալ օրը, իւր աշխատութեան ժամերի միջոցին միանդամայն արթուն դրութեան մէջ. բայց այդ բոլորովին սխալ է: Մի մարդ, որ նախընթաց երեկոյին խմել է մի շիշ գինի, մի բաժակ օղի, կամ երկութաս գարեջուր, գտնուում է գրգռւելուն յաջորդող թմրութեան ճնշման տակ և այդ պատճառով մտաւորապէս ընկճած դրութեան մէջ, որն աւելի սաստկանում է ծխելով: Որպէս զի միշտ չափաւոր ծխող և խմող մարդը կարողանալ ընական վիճակի բերել իւր ուղեղը, նա պէտքէ ամենաքիչը, մի, շաբաթից աւելի գինի չը խմի ու չը ծխի*.

* Բայց ինչո՞ւ չըծխող և չըխմող մարդիկ մատառ և բարոյական աւելի ստոր առտիճանի վրայ են գտնըւում, բան ծխող ու խմող մարդիկ: Եւ ինչո՞ւ խմող և ծխող մարդիկ յաճախ արտայայտում են ամենաբարձր մտաւոր և հոգեկան յատկութիւններ:

Սորա պատասխանն այս է, որ մենք չըգիտենք այն բարձր աստիճանը, որին կոչասնէին ծխող և խմող մարդիկ, եթէ նրանք չըծխէին և չըխմէին: Եսկ այն հանգամանքից, որ ստորացուցիչ հարբեցողութեան ենթակայ մարդիկ այնուամենայնիւ արտադրել են մեծ գործեր, մենք կարող ենք եղակացնել միայն, որ նրանք աւելի մեծ գործեր կըկատարէին, եթէ չըհարբէին: Շատ համանական է, որ ինչպէս ասում էր ծանօթներից մէկը, Կանտի գորերը գուած էին ինիի այն գիսի տարրինուի

իսկ ալդ երբէք տեղի չէ ունենում . այնպէս որ,
մեր աշխարհում՝ թէ ալոց կառավարող, թէ սո-
վորեցնողների, թէ կառավարող և թէ սովորող
մարդկանց միջոցով տեղի ունեցածների մեծ մասը
կատարում է հարբած ժամանակ :

Թող հանաք կամ չափազանցութիւն չըհամա-
րեն այս . մեր կեանքի այլանդակութիւնն ու ան-
մտութիւնը գլխաւորապէս առաջ է գալիս այն
մշտական հարբած դրութիւնից, որի մէջ ընկնում
է մարդկանց մեծամասնութիւնը: Միթէ կարելի
բան է, որ չըհարբած մարդիկ հանգիստ կերպով
անէին այն, ինչ որ կատարում է մեր աշխարհում
սկսած էլֆելի աշտարակից՝ մինչեւ ընդհանուր
զինւորագրութիւնը: Առանց որեւէ կարև որութեան
կազմւում է ընկերութիւն, ժողովւում է դրամա-
գրուխ, մարդիկ աշխատում են, յատակագծեր կազ-
մում, միլիօնաւոր աշխատանքի օրեր և միլիօնա-
ն գատ լեցուվ, եթէ նա այնքան շատ չըծխէր: Երկրորդ՝
չըպէտրէ մոռանալ և այն, որ մարդս որբան սոսր է
կանգնած մտաւորապէս և բարյապէս, այնքան թէ և
զգում զիտակցութեան և իւր կեանքի անհամերաշխու-
թիւնն և աւելի թէ կարիք է զգում չարբելու և չէնց
այդ պատճառով էլ տեղի է ունենում այն երեսյթը, որ
ամենազայռուն կազմւածքները նրանք են, որոնք չիւան-
դութեան չափ զգում են կեանքի և խղճի անհամերաշ-
խութիւնն և անձնատուր լինելով թմրեցուցիչ միջոցնե-
րի, մեռնում ու կորչում են նրանց շնորհիւ:

ուր փուլթ երկաթէ ծախուռում մի աշտարակ չինելու,
և միլիօնաւոր մարդիկ իրենց պարտականութիւն
են համարում բարձրանալ այդ աշտարակի գլուխը,
լինել այնտեղ և իշնել լետ և այդ աշտարակի շինու-
թիւնն ու մարդկանց այցերութիւնը ուրիշ ոչ մի դա
տաղութիւն առաջ չի բերում, բացի ուրիշ տեղերում
աւելի բարձր աշտարակներ շինելու ձգտումից:

Սրբուն, չԵհարբած մարդիկ կարող են այդ
անել: Կամ մի այլ բան. Եւրոպական բոլոր ազ-
գերն արդէն տասնեակ տարիներ զբաղւած են
մարդկանց կոտորելու ամենալաւ միջոցներ հնա-
րելով և սպանութիւն սովորեցնելով չափահաս բո-
լոր երիտասարդ մարդկանց: Ամենքն էլ գիտեն,
որ բարբարոսների որեւէ լարձակումն տեղի ունե-
նալ չի կարող, որ սպանութեանց պատրաստու-
թիւններն ուղղած են քրիստոնեալ ժողովուրդ-
ների կողմից իրար գէմ: Ամենքն էլ գիտեն, որ
դա ծանր, ցաւալի, անյարմար, աւերիչ, անբարոյա-
կան, անաստած և անմիտ բանէ և ամէնքն էլ
պատրաստութ են վիխագարձ սպանութեան հա-
մար: Մի քանիսը հնարյում են քաղաքական գա-
ննագան կոմբինացիաներ (համախմբումնէր), թէ
ով ում հետ պէտք է զաշնակից լինի և որոնց
պէտք է կոտարի: Միւսներն իշխում են սպանու-
թեան համար պատրաստողների վրայ. երբորդ
մասն էլ ակամալից՝ խղճի և գիտակցութեան հա-

կառակ՝ ենթարկում է կոտորածի ալդ նախապատրաստութեանց: Միթէ արթուն (ժուժկալ) մարդիկ կըկարողանալին այսպիսի բան անել: Միայն հարբած և երբէք ըբաթափող մարդիկ կարող են անել ալդ գործերն և ապրել կեանքի և խղճի այն սոսկալի հակասութեան մէջ, որում ապրում են մեր աշխարհի մարդիկ ոչ թէ միայն ալս, այլ և միւս բոլոր դէպքերում:

Ինձ թւում է, որ մարդիկ խղճի պահանջների և իրենց կենցաղավարութեան այսպիսի հակասութեանց մէջ երբէք չեն ապրել:

Մեր ժամանակի մարդկութիւնը կարծես թէ մի ինչ որ բա՛ից կպել՝ ըռնւել է: Կարծես թէ կայ մի ինչ որ արտաքին պատճառ, որն արդելք է դառնում նրան հասնելու այն դրութեան, որ յատուկ է նրա գիտակցութեան:

Եւ դարուս՝ եթէ ոչ միակ, գոնէ գլխաւոր պատճառը հարբեցութեան ֆիզիքական այն դրութիւննէ, որի մէջ գինով և ծխախոտով գնում է իրան աշխարհի մարդկանց մեծամասնութիւնը:

Ալդ մեծ չարիքից ազատուիլը մարդկալին կեանքի դարագլուխ կը լինի և կարծէք ալդ դարագլուխը սկսում է:

Զարիքը ճանաչուած է:

Հարբեցուցիչ միջոցների գործածութեան վերաբերութեամբ գիտակցութեան մէջ արդէն կատարուել

է գոփոխութիւն:


Մարդիկ հասկացան նրանց վնասը և սկսում են մատնանիշ լինել նրա վրայ և գիտակցութեան մէջ տեղի ունեցած անհկատելի գոփոխութիւնը անկասկած առաջ կըբերի մարդկանց ազատուիլն հարբեցնող միջոցներից:

Իսկ հարբեցնող նիւթերից ազատուիլը կըբանայ նրանց աչքերը գիտակցութեան պահանջների վերաբերութեամբ և նրանք կըսկսեն անցկացնել իրենց կեանքը խղճի պահանջների համաձայն:

Եւ կարծես թէ ալդ արդէն սկսում է:

Եւ ինչպէս միշտ՝ սկսումէ բարձր շրջաններից այն ժամանակ, երբ արդէն վարակուած են բոլոր ստորինները:





406

2013

«Ազգային գրադարան



NL0235054

